ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 92

«24» 11 2021 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑԿՈՂ ԲԱԺԻՆՆԵՐԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 39, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 41, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 70 ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և օրենսդրությամբ վերապահված լիազորությունների արդյունավետ, համակարգված ու միասնական իրականացումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 2-րդ մասի 8-րդ կետով և 21-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության դատախազության վիճակագրության և վերլուծության բաժինը ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող բաժինը միացման ձևով վերակազմակերպել՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող ու վիճակագրության բաժին» անվանումով:

2. ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի

Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանով հաստատված հավելվածի՝

1) 33-րդ կետի 9-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

2) 33-րդ կետի 22-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող ու վիճակագրության բաժին.»:

3. ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կառուցվածքը, Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ցանկը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 9-ի N 19 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 41 հրամանով հաստատված 3-րդ հավելվածի՝

1) 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

2) 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22) Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող ու վիճակագրության բաժին,»:

4. ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 29-ի N 92 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 70 հրամանում՝

1) 1-ին կետի 9-րդ ենթակետը և N 9 հավելվածն ուժը կորցրած ճանաչել,

2) 1-ին կետի 22-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող ու վիճակագրության բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 22-ի (կցվում է),»:

3) N 22-րդ հավելվածով հաստատված կանոնադրության 10-րդ կետը լրացնել 8-10-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8) դատախազության գործունեության հաշվառման վիճակագրական ձևաթղթերի, հաշվետվությունների ձևերի և հաշվետվությունները կազմելու միասնական կանոնների մշակումը.

9) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքներով դատախազությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանն ուղղված վիճակագրական նյութերի ապահովումը.

10) դատախազության գործունեության վիճակագրական տվյալների վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացումը:»:

4) N 22-րդ հավելվածով հաստատված կանոնադրության 16-րդ կետը լրացնել 36-42-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«36) հանցավորության, քննչական աշխատանքի, ըստ ոլորտների դատախազական գործունեության վիճակը բնութագրող վիճակագրական տվյալների հավաքագրում, համադրում, ստուգում, ամփոփում, վերլուծում և դրանց արդյունքներով տեղեկատվական նյութերի նախապատրաստում.

37) դատախազական գործունեության ոլորտներում իրավիճակի և զարգացման միտումների մասին անհրաժեշտ վերլուծական նյութերի ներկայացում.

38) հանցավորության վիճակի, հանցագործությունների բացահայտման, քննչական աշխատանքի, դատախազական հսկողության մասին համապատասխան վիճակագրական տվյալներով և տեղեկատվությամբ ապահովում.

39) դատախազությունում վիճակագրական հաշվետվությունների ժամանակին ստացում, ուսումնասիրություն, վերլուծություն և ամփոփում.

40) համապատասխան պետական մարմիններից դատախազության համար անհրաժեշտ վիճակագրական տվյալների ստացման ապահովում.

41) ամսական, կիսամյակային և տարեկան հաշվետվությունների ու ամփոփ վերլուծությունների նախապատրաստում.

42) դատախազության վիճակագրական տվյալների հավաքում համակարգչային համապատասխան ծրագրում:»:

5. ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների ընդունած և գործող իրավական ակտերում «Հայաստանի Հանրապետության դատախազության վիճակագրության և վերլուծության բաժին» և «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող բաժին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող ու վիճակագրության բաժին» բառերով և դրանց հոլովաձևերով:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

7. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

8. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Պաշտոնակատար,
արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական՝ **Գ.Բաղդասարյան**